



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Վիճյամ Սարոյան. գրողի կյանքի,
աշխարհայացքի արտացոլումը
ևրա ստեղծագործություններում

ԱՌԱՐԿԱ

Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ

Աիդա Ստեփանյան

ՄԱՐԶ

Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի թիվ 9 հիմնական
դպրոց

Բովանդակություն

Ներածություն	2
Գրողի կյանքի, աշխարհայացքի արտացոլումը ևրա ստեղծագործություններում	5
Ակունքները	6
Ջիշողություններ մանկություն և պատանության տարիներից	8
Կրթությունը.....	10
Ստեղծագործությունը	12
Եզրակացություն	16
Օգտագործած գրականության ցանկ	17

Ներածություն

Հանրակրթական դպրոցի աշակերտը «Գրականություն» առարկան իբրև ինքնուրույն առարկա ուսումնասիրում է յոթերորդ դասարանից: Առարկայի ուսուցումը պետք է դրվի լուրջ հիմքերի վրա, որովհետև այն նպաստում է սովորողի կայացման գործընթացին, կերտում է նրա զգացմունքային, հոգևոր և մտավոր աշխարհը, մարդուն և աշխարհը ճանաչելու ուղիներ է ձևավորում: Առարկայի ուսուցումը պետք է նպաստի կյանք մտնող սերնդի՝ հայ և համաշխարհային գրականության նմուշների ընթերցման ցանկությանը, գրականագիտական, լեզվական անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը և գեղարվեստական ճաշակի զարգացմանը:

Կարևոր է, որ աշակերտը անհրաժեշտ գիտելիք ձեռք բերի տվյալ գրողի կյանքի հատկապես այն հատվածների վերաբերյալ, որոնք ստեղծագործությունների կենսական ազդակ են դարձել, պատկերացում ունենա ստեղծագործական ճանապարհի և գրական ուղղությունների, հայեցակետերի մասին, կարողանա ոճով և բառամթերքով ճանաչել գրողին:

Գրական ճաշակը ձևավորվում է ընտրված գրողի և գրական նյութերի ընթերցանությամբ և ուսումնասիրմամբ: Գրողի և կամ գրական ստեղծագործության նկատմամբ դեռևս կայուն կամ գոնե մեկնարկային գրական ճաշակ չձևավորած աշակերտի հետաքրքրասիրությունը շահագրգռելու առումով շատ կարևոր է ուսուցչի նախաձեռնողականությունը: Աշակերտի կողմից գրողին ընկալելու - ընդունելու համար ուսուցչի ելակետային ուղղորդումները միտված պիտի լինեն գրողի կենսագրական փաստերի, հուշագրության, նամականիի, հարցազրույցների ընտրողաբար (նկատի ունենալով սովորողների թիրախային խումբը) մատուցմանը:

Տեղին է նաև գրականագիտական հասկացությունների բավարար իմացությունը, որն էլ կարող է աշակերտի հնարավորությունները մեծացնել գիտելիքների վերաբերյալ ընդհանրացումներ կատարելիս:

Չամաշխարհային ճանաչում ձեռք բերած օտարագիր հայ գրող Վիլյամ Սարոյանին ուսումնասիրելիս հայ և համաշխարհային գրականության հեղինակների ստեղծագործական միջավայրի, գրելու նյութի և դրդապատճառների մասին աշակերտների ձեռք բերած գիտելիքները համեմատելի են դառնում:

Գրողին հասկանալու և արժևորելու համար տեղին է ուսումնասիրել նրա ծննդավայրը, այն պայմաններն ու միջավայրը, որում մեծացել է, ստացած կրթությունը, աշխարհայացքի ձևավորման ակունքները, ստեղծագործական հաջողությունների կամ անհաջողությունների պատճառների վերլուծությունը: Այսպիսի աշխատանքը ճիշտ կազմակերպելու, նաև նպատակային դարձնելու համար կարևոր է ուսուցչի կողմից նախապես թիրախային հարցերի ձևակերպումը և առաջադրանքների հանձնարարումը:

Թիրախային հարցերի ձևակերպումը և առաջադրանքների կատարումը պիտի նրբանկատորեն ուղղորդվի և երբեք չլինի ինքնանպատակ, այլ աշակերտին նախապատրաստի հաջորդ աշխատանքներին՝ կապ ստեղծելով նախորդի հետ, նպաստի գիտելիքի ընդհանրացմանը, խորացմանը և աշակերտի կողմից հետևությունների կատարմանը:

Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» թատերախաղը ուսուցանելու և աշակերտների կողմից ընկալելու համար (բովանդակության շարադրանքի իմացությունը դեռևս ստեղծագործության ընկալում չէ) որոշակիացնում ենք՝

Նպատակը - զարգացնել աշակերտի՝ գրական ստեղծագործությունը գրողի կենսագրության, ստեղծագործական ընթացքի, գրական ու պատմական ժամանակաշրջանի, աշխարհըմբռնման հանգուցակետում ընկալելու և վերլուծելու կարողությունները

Խնդիրները

Ուսումնասիրել՝

- Վ. Սարոյանի՝ օտարալեզու գրողի ակունքները՝ օգտվելով իր ստեղծագործություններից

- դրվագներ մանկության և պատանության շրջանից, պատճառաբանել ընտրած դրվագների կարևորությունը

- ստացած կրթությունը, ձևավորել կարծիք կրթված լինելու չափանիշների մասին

- ստեղծագործական առաջին փորձերը, հաջողությունները, ձախողումները

- գրողի ընտանիքը. ստեղծագործություններում գտնել ընտանիքի անդամներին, սովորույթներին, կենցաղին, հայկականությանը վերաբերող հատվածներ

- գրական ազդեցությունները, կարդալ հուշապատումները, առանձնացնել Սարոյանի նախընտրած որևէ ստեղծագործություն կամ գրական հեղինակ, որից ներշնչվել է պատանության տարիներին

- աշխարհահայացքը, առանձնացնել ընդունելի կամ մերժելի ձևակերպումները

Գրողի կյանքի, աշխարհայացքի արտացոլումը նրա ստեղծագործություններում

Ես լիովին երջանիկ մարդ եմ համարում Վիլյամ Սարոյանին: Անընդհատ զարմանալու ընդունակությամբ է օժտված այդ մարդը: Չարմանքն ավելի ուժեղ ու հատկանշական է երեխաների մոտ՝ մաքուր, ազնիվ, անսահմանորեն գեղեցիկ: Երջանիկ են այն մարդիկ, որ տարիքն առնելու հետ չեն կորցնում զարմանալու ընդունակությունը: Սարոյանը հենց այդ մարդկանցից է, ուղղակի մեծ երեխա և այն էլ հանճարեղ: Չարմանքով գրում է բաների մասին, որոնք, թվում է, այնքան հասարակ են, պարզ, սովորական, որ հետաքրքրություն չեն ներկայացնում: Բայց դրանց խորքում այնքան պայծառ իմաստություն, փիլիսոփայական վեհություն, զգացմունքների բազմազանություն, արվեստ, հրճվանք կա. Էլ ոնց չասես, որ զարմանքը տանում է դեպի անզարմանալին, տանում է դեպի ճշմարտության հայտնագործումը:

Մարտիրոս Սարյան

«Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, **բայց ոգին, որ ինձ մղում է գրելու, հայկական է: Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին**»:[1]

Վ. Սարոյան

Ակունքները

**Մենք արտադրություն ենք բոլորի կողմից
ընդունված երկու բաների՝ ժառանգականի
և միջավայրի:
Ես հայ եմ արյունով:
Ես ամերիկացի եմ միջավայրով: [2]**

Չուշապատումներից մեկում Սարոյանը գրում է, որ երբ դիտում է ուրիշ ընտանիքների զավակներին, մտածում է իր սեփական զավակների, ինչպես նաև իր՝ Արմենակ և Թագուհի Սարոյանների չորս երեխաներից մեկի մասին և զարմանում է, թե ինչպես մյուս երեխաները բարեկիրթ են, ողջամիտ, գործնական, իսկ իրենց ընտանիքի երեխաները՝ տարօրինակ: «Ինձ մտում է եզրակացնել, որ հավանաբար մենք խենթեր ենք, բայց ոչ հասարակ տեսակի կապվելիք գժեր: Մենք ամեն ինչում սխալ ենք գտնում: ...Ես աչքի առջև եմ բերում մեր գերդաստանի բոլոր ճյուղերը և նրանց մեջ չեմ կարողանում գտնել մեկին, որ լինի բարեհամբույր, պարզ, ժուժկալ, քաղաքավարի, հմայիչ: ...Ծռությունը անցնում է իմ գերդաստանի յուրաքանչյուր ճյուղի միջով: Մեզանից ամեն մեկը յուրատեսակ ծուռ է: Ինչու ենք այդպես, դա ինչպե՞ս է պատահել»: [2]

Գրողի պատմվածքներն ու պիեսները վկայում են, որ նա ամբողջ կյանքում սիրել ճանաչել և հայտնաբերել է իր արմատները. նրանք ներկայանում են իբրև տատի մոր, հոր, մորեղբոր, հայ մարդու հավաքական մարմնավորողներ, որոնք իրենց բարքերով, սովորություններով, նիստուկացով, բառուբանով ստեղծում են ազգային կոլորիտ՝ վերակենդանացնելով ծննդավայր Բիթլիսը:

Մոր մայրը Լուսնթագ Ղարոզլանյանն էր՝ Մինաս Սարոյանի այրին, որին Սարոյանը այսպես է հիշում. «Իմ մեծ մայր, Ամերիկայի մեջ ալ Բիթլիս կապրեր: Ան առանձին աստված ուներ, կրոն չէր գիտեր, անոր աստված ուրիշ էր, ան ամենեն շատ մարդու գութին ու խելքին կհավատար ու չէր վհատիր, չէր հուսահատիր»: [3]

Մանկության տարիների անկեղծությամբ է խոսում Յոհան Գոթֆրիդ Եր-
ճովհաննիսյանի (Պետրոս Սարոյանի այրին) մասին, որը Սարոյանի հայրական
տատն էր. «...հորս մորը՝ Յոհաննիսյանին, մեր տունն չէին թողնում այն պատճառով,
որ ունևոր մարդու մայր չէր»: [4]

Իր մասին գրում է, որ ծնվել է 1908-ի օգոստոսյան մի գիշեր Ֆրեզնոյի իրենց
մուկ խրճիթում:

Մայրը՝ Թագուհին, սրտնեղած էր. Բիթլիսում ծնված երկու աղջիկների ու
Երզրումում ծնված տղայից հետո ևս մեկը

« ...Ուրեմն՝ ծնվեցի: Յետո՞ ինչ: Ո՞վ չի ծնվել որ: Որ ծնվել ես, էլ պրծում չունես,
ընկել ես՝ պիտի քաշես»: [5]

Ֆրեզնոն երկաթուղային քաղաք էր, քաղաքով մեկ հայեր՝ գաղթած Բիթլիսից,
Վանից, Մուշից, Երզրումից:

Մոր մայրը՝ Լուսնթագը, գոհ չէր, որ աղջիկն ամուսնացել է ոտանավորներ գրող
քահանայի հետ. իր դստեր համար այլ ամուսին էր փափագել:

Ամերիկայում առևտուր էին անում, մեքենա էին հնարում, խաբում էին,
խորամանկում, բանաստեղծ- քարոզիչը իր տեղը չէր գտնում կորած- մոլորած
Ֆրեզնոյում:

Չաջորդ օրը Սանջոից հեծանիվով ժամանել է հայրը՝ Արմենակը, և նորածնին
անվանել է Վիլյամ՝ ի պատիվ իր ընկերոջ: Ընտանեկան Աստվածաշնչում
արձանագրվեց անունը՝ Վիլյամ, և ազգանունը՝ ժառանգած մայրական և
հայրական պապերից:

Հիշողություններ մանկություն և պատանության տարիներից

Սարոյանը երեք տարեկան էր, երբ մահացավ հայրը՝ որը թողնելով չորս զավակներին: Մայրը երկու տեղ էր աշխատում, բայց ստիպված էր չորս զավակներին հանձնել Օբլենո քաղաքի Ֆրեդ Ֆինչ մանկատան խնամքին և շաբաթը մեկ անգամ էր կարողանում այցելել երեխաներին:

Մանկատան հետ կապված ցավի, ընկճվածության և մերժման հիշողությունները և հասունացնող տխրությունները Սարոյանին ուղեկցում էին ամբողջ կյանքում: Մանկատուն այցելությունների ժամանակ մոր բռնազբոսիկ ծիծաղը մինչև խոր ծերություն հանգիստ չէր տալիս գրողին:

Յոր կերպարը վերականգնում էր երևակայական հիշողությամբ. «Իմ հայր բանաստեղծ էր: Ես անոր չեմ հիշում, երբ մեծցա ու պատկերին նայեցա՝ բանաստեղծ էր...»: [6]

Սարոյանը մի հարցազրույցում ցավով և վարակիչ անկեղծությամբ է խոսել տխրություն - երևակայություն - հիշողություն կապի մասին. « Եթե գտնվում ես սիրով լեցուն մի ընտանիքի կենտրոնում, քո հիշողությունը ուշանում է: Եթե դու զրկվում ես քո հորից՝ նրա մահով, քո մորից՝ պարտադրաբար և գտնվում ես տարօրինակ հոտ ունեցող մի տեղ, որ կոչվում է որբանոց, առաջին պատկերը, որ հիշում ես, բաժանումն է քո մորից: Դու դեռ երեք տարեկան չկաս, մայրդ հեռանալուց առաջ ասում է. «Դու հիմա մեծ մարդ ես, ամոթ է լաց լինելը»: Դու իսկույն վերջ ես տալիս քո լացին, ասում ես՝ մայրս իրավունք ունի, ես մեծ մարդ եմ: Յետո հսկիչն է գալիս և քեզ ուղեկցում է դեպի քո նեղլիկ անկողինը: Դա բացում է հիշողությունը:

Եթե հայրս աշխատանքից վերադառնար, բռներ իմ ձեռքից և ասեր, թե գնանք ման գալու, դիտենք խաղողի վազերը, ծաղիկները և լսենք թռչուններին, ես չէի հիշի այդ, որովհետև այդտեղ ցավ չկա»: [7]

Որբանոցային առօրյայի տխուր և ուրախ տպավորություններն ու ակնթարթները, մորից հեռու լինելու մորմոքը, հոր կորստյան՝մանկան համար անլուծելի հանելուկը հյուսում էին նրա երևակայական աշխարհը, որ տարիներ հետո պիտի դառնար հասուն աշխարհագրագողություն: Մանկության տարիների զգացողությունները դառնում են նաև սարոյանական նրբազգացության շաղախը:

Չինգ տարի անց մորեղբոր՝ Արամի օգնությամբ երեխաներին դուրս են բերում որբանոցից:

Սարոյանը դարձյալ Ֆրեզնոյում է՝ իր ընտանիքում: Ապրում է աշխույժ, տղայական կյանքով: Գնում է դպրոց, բայց դպրոցական տարիները նրա հիշողության մեջ մնացին իբրև անհրապույր և տաղտկալի էջեր: Տղայի համար իսկական հետաքրքրությունները տան պատերից դուրս էին:

Յոթ տարեկանից նա սկսեց դրամ վաստակել լրագրեր վաճառելով: Նրա տարեկիցները դպրոցից հետո խաղում էին, վայելում ընտանիքի ջերմությունը, այնինչ Վիլյամը պիտի ջանար իր վաստակով ընտանիքի հոգսը թեթևացնել: Տասներեք տարեկանում հազավ փոստատան ցրիչի համազգեստը: Սոսկալի շոգին պետք է հեծանիվով սլանար հարազատ քաղաքի փողոցների շիկացած ասֆալտի դժոխքով մեկ՝ տեղ հասցնելով ու հավաքելով սիրային, սգո և գործարար հեռագրեր:

Տասնութամյա Վիլյամ Սարոյանը արդեն հասցրել էր փոստատար լինել, սևագործ բանվոր, խաղողի այգիներում մշակ լինել: Շուտով թողնում է հարազատ դարձած Ֆրեզնոն և մեկնում Սան Ֆրանցիսկո:

Կրթությունը

Վ. Սարոյանը կանոնավոր կրթություն չի ստացել:

«Երրորդ դասարանում առաջին անգամ վաստակեցի դպրոցի ամենաչար տղայի համբավը, ու ինձ հաճախ անկյուն էին կանգնեցնում, հայիոյում, քաշում մազերս ու ականջներս, և ի վերջո վնդեցին դպրոցից», - գրում է Սարոյանը: Այնուհետև սովորում է մի ուրիշ դպրոցում, բայց այնտեղ էլ է կրթությունը մնում անավարտ: Միամիտ, բայց սուր մտքով աչքի ընկնող և ամեն ինչի հանդեպ եռանդուն հետաքրքրասիրություն դրսևորող պատանուն ուսման կանոնավորությունն ու դպրոցական օրենքների շրջանակը կաշկանդում էին:

Երբ ուսուցիչներից մեկը արտասովոր պատանուն խորհուրդ է տալիս կրթությունը շարունակել քոլեջում, Սարոյանը պատասխանում է. « Ինչի՞ս է պետք քոլեջում սովորելը: Որպեսզի շարունակեմ տքնել ամեն տեսակ հիմարությունների վրա՞: Եվ հանդուրժեմ հարուստ հայրիկների օսլայած վերնաշապիկներ, պլավան կոշիկներ հագած բալիկների վիրավորական շարժումները: Հենց նրանք էլ թող նստեն քոլեջներում: Նրանց դա պետք կգա, իսկ ինձ՝ ոչ»: [8]

**Աշխարհում կարդալը ոչ մի բանի
հետ չեմ փոխի: ... Ես սիրում եմ
անգամ
թույլ գրողներին և աղբանոցի
գրքերն
եմ սիրում [9]
Վ. Սարոյան**

Այսուհետ գրքերն ու ընթերցանությունը դարձան տղայի ուսուցիչները: Վաղ տարիքից նա կլանվեց լուրջ ընթերցանությամբ: Գրադարանում երկար

ժամեր էր անցկացնում: Կարդում էր ձեռքն ընկած գիրքը առանց ընտրության, տարերայնորեն կլանում էր գրականությունը, գրքերով հայտնագործում էր մարդկանց: Տասներկու տարեկանից կարդում էր Մարկ Տվեն, Ուիլսոն, Չեխով, Գորկի, Յեմինգուեյ, Օսկար Ուայլդ, Մոպասան:

«Երկար ժամանակ մտածում էի, թե գրողն Աստված է: Երբ վերջապես հասա Գի դը Մոպասանին, հասկացա, որ գրողը մարդ է: Այդ օրը, երբ կարդացի Մոպասանի «Չանգը» պատմվածքը, կյանքիս հենց այն պահն էր, երբ ինքս գտա ինձ: Ես պարզապես լցված էի ինձնում հայտնագործած մեծության գիտակցությամբ»: [10]

Վիլյամի անհագ ընթերցանությունը չի վրիպում մոր աչքից: Մայրը որդուն է հանձնում ընտանեկան թանկագին մասունքը՝ Արմենակ Սարոյանից մնացած թղթերի ու տետրերի մի կապոց: Մոր և հարազատների պատմածներով գիտեր, որ հայրը կարոտաբաղձ հայ էր և չհամակերպվեց ամերիկյան կյանքին: Վիլյամին վիճակված էր լինել հոր թղթերի ընթերցողը, սակայն լեզվի տառերն անձանոթ էին, անկարող էր կարդալ:

Անհասկանալի տառերով թղթերի վրա Վիլյամը կարդաց այն հույզերն ու զգացմունքները, որոնք ներշնչել էին գրել հորը. «Հորս լուսանկարներում ես գրող տեսա, որոշ ժամանակ անց ես տեսա Մոպասանի և Չեխովի լուսանկարները, և ամեն անգամ, ուշադրությամբ նայելով նրանց դեմքերին, ես զարմանում էի, թե որքան նման են նրանք հորս: Ես չեմ ճանաչել նրանց, չեմ ճանաչել հորս, բայց նրանք ևս՝ յուրաքանչյուրն իր ժամանակին ու բոլորը միասին, դարձան հայրերս»: [11]

Ստեղծագործությունը

Չենց որ դուրս եկա որբանոցից (հազիվ ութ տարեկան էի), ես սկսեցի լսել իմ պատմվածքները: Ես լսեցի դրանք իմ մայրական և հայրական տատիկներից և Կարապետ Սարոյանից: Ծերուկները բոլորը սքանչելի պատմություններ ունեն: [12]

Վ. Սարոյան

Քսանվեցամյա Վիլյամ Սարոյանի մուտքը ամերիկյան գրականություն և անսպասելի էր, և հանդիսավոր: Տպագրվեց նրա առաջին պատմվածքը՝ «Խիզախ պատանին թռչող տրապեզի վրա», մի քանի ամիս հետո՝ նույն խորագրով պատմվածաշարը: Չինգ տարի անց ամերիկյան ընթերցողը ջերմեանդ սիրով և նոր երախտագիտությամբ ընդունեց երիտասարդ հեղինակին. տպագրվել էին առաջին թատերգությունները՝ «Իմ սիրտը լեռներում է» և «Քո կյանքի ժամանակը»:

Սարոյանը թողել է գրական վիթխարի գրական ժառանգություն՝ վեպեր, վիպակներ, պատմվածքներ, թատերգություններ, մտորումներ, հուշապատումներ, առակներ: Սարոյանի հերոսները կյանքում ձախողված, մերժված, երբեմն ամեն ինչ կորցրած մարդիկ են, որոնց մեջ, սակայն, երբեք չի մարում ապրելու և ապրեցնելու կայծը: Սարոյանը ցավ է ապրում, որ հայերին համարում էին երկրորդ կարգի մարդ, նրանց նեղում էին, բռնադատում, նրանց ատում էին, իսկ ինքը հայ է: Արհամարհվածների ու աստվածների թվում լինելը իրեն դառն ուրախություն էր պատճառում:

Կյանքը այս մարդկանց համար Աստծու պարզ և չէր, այլ օտարության մեջ հայրենիքի կարոտին ձուլված գոյամարտ: Այս ամենը նաև գրողի՝ Սարոյանի ճակատագիրն էր, որ պետք է սրբագրվեր և դառնար գրականություն:

Սարոյանը պարզ գիտակցում էր, որ իր՝ Բիթլիսի հայ լինելը ոչ մի նշանակություն չունեի գրական ժամանակակիցների համար, սակայն էական ստեղծագործական խթան էր իր համար: Նա իր գրական ճանապարհը ձևավորեց՝ բոլորովին չերկնջելով ամերիկյան դժվարահաճ ընթերցողից. նրա աշխարհայացքի կարևոր նախադրյալը ժամանակի խորքերից եկող

ճշմարտություններն էին: Այդ ճշմարտությունը հաստատվում է արյունով իր օրերին հասնող դարավոր հիշողությամբ:

Խորունկ ժամանակներից եկող ճշմարտությունը ըստ գրողի մեկն էր. հայերեն չի գրում, բայց հայերեն է նայում աշխարհին: Այս կանչը ընթերցողին հասցնելու ճանապարհին Սարոյանը մաս-մաս բացվում էր աշխարհի առջև՝ կերպավորվորվելով տարբեր պատմվածքներում ու պիեսներում:

Գրողի համար ստեղծագործական հաղթանակի մի այլ կարևոր նախապայման էր ծագումնաբանական ակունքներից ժառանգած ոգին. «Չեմ ուզում մի օր անցկացնել առանց մի բան անելու: Քառասուն տարի է, որ այդպես եմ ապրում: Ես կարծում եմ, որ դա գալիս է այն օրից, երբ հայրս մեռավ: Չէի ընդունում նրա հանկարծակի և բացարձակ հեռացումը և ես պատասխանեցի այդ հեռացումին. «Ձեզ հնարավոր չպիտի լինի տղուն էլ հեռացնել: Ես մի բան պիտի անեմ»:

Գրականությունն ընտրելուց առաջ ես ուսումնասիրեցի այն ամենը, ինչ ժամանակը չի կարող ավերել՝ արձաններ, նկարներ, երաժշտություն և գրականություն: Ուրիշ ոչինչ: Փողը գործ չունեի այնտեղ»: [13]

Սարոյանն իր գրական սկզբունքների մասին խոսելիս խոստովանել է, որ իր համար մեծ պատասխանատվություն է «բառեր գործածող» լինելը. չի ուզում մի հատիկ կեղծ բառ արտաբերել: Իրեն համարում է պատմություն պատմող, և այդ պատմությունը մարդու մասին է: Չեզնելով գրականության ընդունված կանոնները՝ մարդուն համարում է այդ բոլոր կանոններից դուրս հրաշալի ստեղծագործություն: Իբրև հրաշալի ստեղծագործության չափանիշ՝ վկայակոչում է Քուչակին. այն համոզմունքն է հայտնում, որ Քուչակը երգել է մարդու և սիրո մասին, և դա է ճշմարիտ ստեղծագործությունը: Չայերեն գրերը կարդալ չիմացող գրողի հոգևոր հարազատությունը Նարեկացու հետ, «Սասնա ծռերի» ոգեղեն տարողության ու խորքի, թումանյանական շռայլության ու պարզության, մաթևոսյանական անմիջականության կրող լինելը կարելի է հասկանալ նրա՝ արյան հետ եկող դարավոր հիշողությամբ:

Այդ դեպքում ինչո՞վ գրավեց Սարոյանը ամերիկյան ընթերցողին: Չարցի պատասխանը Սարոյանը տալիս է՝ փորձելով բացատրել, թե որն է «Իմ

սիրտը լեռներում է» պիեսի բարոյախոսությունը. «Դա հասարակ ու հին է, ինչպես աշխարհը. ավելի լավ է լինել բարի, քան լինել չար»: [14]

Հարցազրույցներից մեկում հարցին՝ «Որն է Ձեր լավագույն թատերգությունը», Սարոյանը պատասխանել է՝ «Իմ սիրտը լեռներում է»: Շարունակելով խոսքը՝ հավելել է, որ իր լավագույն պատմվածքն էլ համարում է «Իմ սիրտը լեռներում է»:

«Իմ սիրտը լեռներում է» պիեսում կողք կողքի են ամերիկյանն ու հայկականը: Ինչպես մյուս ստեղծագործություններում, բովանդակության մեկնարկային հարթակը գրողի անձնական կյանքն է կամ հայկական իրականությունը: Պիեսի կապակցությամբ Սարոյանը գրել է. «Ես իմ կյանքը կգրեմ: ...Ինձի համար գրել և ապրել կյանքը նույնն են: Ջոնին ես եմ, բայց Մեք-Գրեգոր ալ ես եմ: ...Իմ հայրը, որ ճանչվոր չէի, բանաստեղծ էր: Եվ ատ մասին իմ հայրը ատպես տեսա: Անունն էր Բեն Ալեքսանդր: Կըլլա հայոց անուն Բենիամին Ալեքսանդրյան»: [15]

Սարոյանը նույն վերնագրով պատմվածք է գրել, հետո՝ 1939 թվականին այն մտահղացվել է իբրև թատերախաղ: Նույն տարին էլ բեմադրվում է

ամերիկյան թատերախմբերի կողմից և գրողին արժանացնում հեղինակավոր գրական մրցանակների:

Պիեսը բեմադրվել է և հաջողություններ է ունեցել նաև հայ բեմում՝ ներդաշնակելով Վ. Աճեմյանի բեմադրական վարպետությունը, Ա. Բաբաջանյանի հրաշալի երաժշտությունը:

Պիեսի հերոսները ճակատագրի բերումով Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում հայտնված, ամերիկյան միջավայրում մերժված, պարտված, անհաջողությունների հետ հաշտված, բայց երբեք չչարացած պանդուխտ հայեր են: Շոտլանդացի բանաստեղծ Բյորնսի՝ իբրև բնաբան ընտրված տողերի կարոտը ծավալվում, խտանում է թափառաշրջիկ ծեր շեփորահարի՝

Մեք-Գրեգորի կերպարում: Նա հասել է կյանքի մայրամուտին, լքված է, թշվառ, սիրտը հեռավոր հայրենի լեռներում է, բայց ապրում ու դեռ ապրեցնում է՝ շեփորի հնչյուններով թրթռացնելով մարդկանց սրտերը:

Ի դեմս Ջոնիի տատի՝ մարեի՝ կերտել է հայ կնոջ՝մոր և մայրական տատի կերպարները:

Չերոսները միմյանց հետ հաշտ են, չեն հակադրվում միմյանց, եթե հակադրվում էլ են (պարոն Կոսակ և Ջոնի, Մեք-Գրեգոր և Ջոնի և այլն), հաշտվում և ներում են միմյանց, նրանց բոլորի թշնամին մեկն է՝ պատերազմը, սովը, անտարբերությունը: Սարոյանն էլ իր հերոսների պես է մտածում. «...Իմ կյանքում մի թշնամի եմ ունեցել. դա էլ ամերիկյան բանակն է»:

Պիեսում բոլոր հերոսները մերժված են. Բեն Ալեքսանդրը հերթական անգամ մերժվել է հրատարակիչների կողմից, Մեք-Գրեգորը փախել է ծերանոցից, տատի միտքը իր հեռու երկրում է, նպարավաճառ Կոսակը սնանկանում է: Ընտանիքում իրեն բաժին հասած դժվարություններից թրժված փոքրիկ Ջոնին փորձում է ձևակերպել աշխարհի անարդարությունը. «Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, պա, բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է»:

Սարոյանը 20-րդ դարի ամերիկյան գրականության ինքնատիպ գրող է, համաշխարհային գրականության բացառիկ երևույթ, հայ ընթերցողի համար՝ «Սասնա ծռեր»-ի հերոսների ազնվությունը, միամտությունը, խենթությունն ու ոգին որդեգրած և օտար մշակույթների խառնարանում այդ ոգին սրբագործած մեծ հայ:

Եզրակացություն

Գրողի կյանքի և ստեղծագործության ուսուցումը կնպաստի աշակերտի՝ վերլուծական և լեզվական կարողությունների (բառապաշար, լեզվական նոր կադապարներ, կապակցված խոսք, թարգմանված երկի դեպքում՝ օտար լեզվի լեզվամտածողության տարրեր և այլն) զարգացմանը:

Աշակերտը կկարողանա՝

1. ստեղծել գրողի դիմանկարը (քարտեզագրման կամ այլ եղանակով), ներկայացնել դիպաշարը, ճանաչել ստեղծագործության կառուցվածքային առանձնահատկությունները

2. բնութագրել գրական հերոսին, վերլուծել ուսումնասիրած երկի վերնագրի կապը բովանդակության հետ

3. բնագրի ուսումնասիրման արդյունքում բացատրել գրական երկի ենթիմաստները, հիմնավորել հեղինակի ուղերձը

4. հաղորդակցվել դասընկերների և ուսուցիչների հետ, փաստերով հիմնավորել սեփական տեսակետը

5. գնահատել գրական երկի և հեղինակի ապրած կյանքի իմացությունը որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման պայման

6. ձգտել ինքնազարգացման և ինքնակրթության

7. դրսևորել հետաքրքրություն գրքի և ընթերցանության հանդեպ

Գրական երկի ուսուցման այսպիսի ընտրությունը՝ գրողի ապրած ժամանակաշրջանից, միջավայրից, աշխարհահայացքից հասնել գրական հերոսի վերլուծությանը, ոչ միայն հնարավորություն է ընձեռում իրագործել

երկի ուսուցման նպատակները, այլև զարգացնում է սովորողների արժեհամակարգը:

Կարելի է առաջարկել գրական երկի վերլուծությունը կատարել նկարագրածին հակառակ՝ գրական հերոսից դեպի հեղինակ ճանապարհով և սովորողին հնարավորություն տալ հետևություն անելու, որ գրական հերոսը հեղինակի աշխարհայացքային վերարտադրությունն է:

Օգտագործած գրականության ցանկ

1. Վիլյամ Սարոյան, հ. 1, 1986, էջ6
2. Վիլյամ Սարոյան, հ. 4, 1991, էջ 388
3. Վիլյամ Սարոյան, հ. 4, 1991, էջ 357
4. Նույն տեղում, էջ311
5. Նույն տեղում, էջ310
6. Հայոց լեզու և գրականություն, 2005, էջ 396
7. Վիլյամ Սարոյան, հ. 4, 1991, էջ 396
8. Նույն տեղում, էջ 410
9. Նույն տեղում, էջ388
10. Նույն տեղում, էջ412
11. Նույն տեղում, էջ413
12. Նույն տեղում, էջ395

13. Նույն տեղում, էջ395

14. Վիլյամ Սարոյան, հ. 1, 1986, էջ10

15. Դ. Գասպարյան, Գրականություն, Ուսուցչի ձեռնարկ, 2011, էջ 57